ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

9 հունիսի 2020թ. թիվ 445-Ա

ՍԻՐՈՒՇ ՊՈՂՈՍՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ
ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 223 հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի, ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 2)-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության պարետի 2020թ. մարտի 17-ի «Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում կիրառվող սահմանափակումների վերաբերյալ» N 2 որոշումը, ինչպես նաև ՀՀ Լոռու մարզպետի 2020թ. հունիսի 1-ի թիվ 01//04740-2020 գրությունը՝ ուսումնական հաստատություններում տարեվերջյան բոլոր միջոցառումներն ու հավաքույթները բացառելու մասին, հաշվի առնելով Ս.Պողոսյանի բացատրությունը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. ՀՀ պարետի կողմից սահմանված անվտանգության կանոնները ոչ պատշաճ պահպանելու համար «ՀՀ Լոռու մարզի Ստեփանավանի Սուրբ Գրիգոր Լուսավորչի անվան թիվ 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրենի պարտականությունները կատարող Ս.Պողոսյանի նկատմամբ կիրառել «նկատողություն» կարգապահական տույժը:

2. Մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետին՝

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով սույն վարչական ակտը եռօրյա ժամկետում հանձնել հասցեատիրոջը՝ ստորագրությամբ առձեռն հանձնելու միջոցով:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Invalid signature

X

ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ

2020թ. հունիսի 9
ք.Վանաձոր